ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունիսի 20-ին Կիև գործուղման
արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Վաչե Տերտերյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Կիև (Ուկրաինա), 2017 թվականի հունիսի 20

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը

Մասնակցել «Քաղաքապետեր հանուն տնտեսական զարգացման» ծրագրի Վերահսկիչ հանձնաժողովի առաջին հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները

Համաժողովին մասնակցում էին Եվրոպական հանձնաժողովի, Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի կենտրոնական և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին ծրագրի սկզբնական արդյունքները, հետագա անելիքները և մարտահրավերները: Անդամ երկրների կողմից ներկայացվեցին գործողությունների ծրագրերը մինչև 2017 թվականի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի համար:

Բացման խոսքով հանդես եկավ Եվրոպական հանձնաժողովի ընդլայնված բանակցությունների և հարևանության գլխավոր տնօրինության «Վրաստան, Մոլդովա և հարևանության անդրսահմանային համագործակցության» բաժնի ղեկավար Մաթյու Բուսքետը:

Անդրադարձ կատարվեց հաղորդակցության ռազմավարության և առաջիկա տարածաշրջանային գործողությունների ներկայացմանը, ինչպես նաև ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերի միջև կազմակերպվեցին բաց քննարկումներ:

Քննարկվեց նաև վերականգնվող էներգիայի հետ կապված հարցեր: Ես իմ ելույթում նշեցի, որ այդ թեման սերտորեն թղթակցվում է ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական զարգացման ծրագրերի, մասնավորապես համայնքներում տնտեսական զարգացմանը միտված աշխատանքների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԵՄ համապատասխան պաշտոնյաների հետ քննարկեցինք Հայաստանին բյուջետային աջակցության, տարածքային համաչափ զարգացմանն առնչվող մի շարք հարցեր:

Նիստի ավարտին տեղի ունեցավ ուկրաինական քաղաքների՝ «Քաղաքապետեր հանուն տնտեսական զարգացման» (M4EG) նախաձեռնությանը միանալու նվիրված ստորագրման արարողություն:

8. Գործուղվողը

Վաչե Տերտերյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը

23.06.2017թ.